

9.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ
----	--

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
62-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

*ՀՀ Սփյուռքի նախարար,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
ԳԴՀ պրոֆեսոր*

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը:

Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ և հայտարարություններ:

Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:

Ազգային ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով»:

Նշված հոդվածը մեկնաբանենք՝ ըստ մասերի: Առաջին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը: Պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում օրենսդիր մարմինը (հավաքական անվանումը՝ պառլամենտ) ունի սահմանադրորեն իրեն վերապահված լիազորություններ, որոնք բնութագրում են նրա էությունն ու նպաստում պառլամենտարիզմի՝ որպես համակարգի կայացմանը:

Հասարակական զարգացումների տրամաբանությունը, 1991թ. սեպտեմբերի

21-ի հանրաքվեի միջոցով Հայաստանի Հանրապետության՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու պատմական փաստը չէին կարող իրենց կնիքը չդնել օրենսդիր իշխանության և պառլամենտարիզմի զարգացման գործընթացի վրա:

Ինչպես երիտասարդ ժողովրդավարություն ունեցող մյուս երկրների սահմանադրություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքում նորովի սահմանվեց պետական իշխանության օրենսդիր մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական նոր իրողությունների պայմաններում նրա ստանձնած դերակատարությանը համապատասխան:

Հայկական ԽՍՀ Պերագույն խորհուրդը ՀԽՍՀ պետական իշխանության բարձրագույն մարմինն էր¹: Եթե Խորհրդային Հայաստանի Սահմանադրությունն ամրագրում էր, որ ժողովուրդն իշխանությունն իրականացնում է միայն ժողովրդական դեպուտատների խորհուրդների միջոցով, ապա Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրությունն ամրագրեց, որ ժողովուրդն իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով: 1995 թվ.-ին ընդունված և 2005 թվ.-ին բարեփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ գլուխը (62-84-րդ հոդվածներ) վերաբերում է օրենսդիր իշխանության մարմնին՝ Ազգային ժողովին: ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և ոչ թե պետական ամբողջ իշխանությունը: Այս հոդվածում հստակեցվում է Ազգային ժողովի տեղն ու դերը պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում, նախատեսվում են օրենսդիր մարմնի գործառույթները, լիազորությունները, կազմավորման ու գործունեության հիմնարար սկզբունքները:

Քննարկվող հոդվածում իր զարգացումն է ստացել սահմանադրական կարգի հիմունքների մաս կազմող այն դրույթը, ըստ որի պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված):

Այսպիսով, համաձայն Սահմանադրության՝ օրենսդիր իշխանության մենաշնորհը պատկանում է Ազգային ժողովին, որն օրենքներ ընդունող միակ պետական մարմինն է: Ընդունվող օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, իսկ այլ իրավական ակտերը՝ Սահմանադրությանը և օրենքներին: Օրենքներից առավել բարձր իրավաբանական ուժ ունեն ՀՀ Սահմանադրությունը, այնուհետ՝ ՀՀ միջազգային պայմանագրերը: Պետական իշխանության որևէ այլ մարմին չի կարող յուրացնել Ազգային ժողովի լիազորությունները, փոփոխել կամ վերացնել օրենքները: Միայն ՀՀ սահմանադրական դատարանն ունի օրենքները հակասահմանադրական ճանաչելու լիազորություն: Ազգային ժողովը կոչված է արտահայտելու ժողովրդի՝ որպես ինքնիշխանության

¹ Տե՛ս Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 1978, էջ 39:

կրողի և իշխանության հիմնական աղբյուրի կամքը: Օրենսդիր մարմինը ձևավորվում է ժողովրդի կողմից՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրության արդյունքում, գաղտնի քվեարկությամբ: ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ խորհրդարանական ընտրությունները կատարվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգերով: Ժողովուրդն իր ներկայացուցիչներին «գործողում է» Ազգային ժողով: Վերջինիս բուն էությունն այն է, որ ունի ներկայացուցչական բնույթ և որպես ներկայացուցչական պետական մարմին պետք է կարողանա արտահայտել հասարակության տարբեր շերտերի, խմբերի, ինչպես նաև տարածքների շահերը, ամրապնդի կապը ժողովրդի հետ: Ազգային ժողովը միաժամանակ և՛ ներկայացուցչական, և՛ օրենսդիր մարմին է: Ազգային ժողովի ներկայացուցչական գործառույթի իրականացումն ապահովող սահմանադրական միջոցներից են նրա վերահսկողական, պաշտոնների նշանակման, ՀՀ Նախագահի, կառավարության, այլ պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանադրական պատասխանատվության կիրառման և այլ լիազորությունները: Ռուսաստանի Պաշտպան Սահմանադրությունն ամրագրում է, որ Պետական դուման ներկայացուցչական մարմին է²: Բելուռուսի (Սահմանադրության 90-րդ հոդված)³, Հունգարիայի (73-րդ հոդված), Ռումինիայի (58-րդ հոդված), Լիտվայի (4-րդ հոդված) սահմանադրություններում առանձնահատուկ նշված են պառլամենտների ներկայացուցչական բնույթն ու էությունը⁴: Կարծում ենք, ճիշտ կլինի ՀՀ Սահմանադրությամբ նախատեսել, որ Ազգային ժողովը նաև ներկայացուցչական մարմին է՝ դրանով ամրագրելով օրենսդիր մարմնի ներկայացուցչական բնույթը, ընդգծելով նրա նշանակությունը պառլամենտարիզմի ձևավորման գործում: Ներկայացուցչական բնույթ կրող պառլամենտի գոյության ու գործունեության արդյունքում է ձևավորվում պառլամենտարիզմը: Պառլամենտարիզմը սահմանվում է որպես պետական, քաղաքական կառավարման համակարգ՝ իշխանությունների տարանջատման, ժողովրդավարական ռեժիմի պայմաններում: Այն հանդիսանում է ժողովրդի շահերն արտահայտող ժողովրդավարական, իրավական կառուցակարգ, սահմանադրաիրավական նորմերով երաշխավորված բազմակուսակցական քաղաքական համակարգի մաս, որտեղ գործադիր իշխանությունը սահմանադրական և քաղաքական պատասխանատվություն է կրում պառլամենտի առջև, իսկ պառլամենտը ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչների միջոցով վերահսկողություն է իրականացնում կառավարության նկատմամբ, երաշխավորում և ապահովում է ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը:

Պառլամենտարիզմը զարգանում է, եթե ապահովվում է պառլամենտական գործունեության արդյունավետությունը, ձևավորվում են պառլամենտական ժողովրդավարության նորմեր, պառլամենտական աշխատանքի պատշաճ մշակույթ և ավանդույթներ:

Պառլամենտի նոր դերակատարությունը և պառլամենտարիզմի զարգացումը հասարակության ու պետության որակական զարգացումների արդյունք են՝ պայ-

² Ст'я Конституция Российской Федерации с комментариями Конституционного Суда РФ, 4-е изд.-е, М., 2004, статья 94, с. 31.

³ Ст'я Конституции стран - членов СНГ, Ереван, 1997, с. 118.

⁴ Ст'я Конституции государств Центральной и Восточной Европы, М., 1997.

մանավորված երկրում կատարվող սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյահոգեբանական, գաղափարական, իրավական, հոգևոր-մշակութային և այլ փոփոխություններով:

Պաշտամենտն իր նպատակային նշանակությամբ հասարակական-պետական կյանքի իրավական կարգավորման առաջնային գործիք է: Եթե պաշտամենտը սահմանում է հասարակության և պետության կեցության անհրաժեշտ պայմանները՝ դրանք ձևակերպելով իրավանորմերում, ամրագրելով օրենքներում, ապա պաշտամենտարիզմը պաշտամենտական հարաբերությունների սուբյեկտների գործունեության կենսական միջավայրը ձևավորող ինստիտուտ է, որը հասունանում է պաշտամենտի գործունեության ընթացքում՝ ընտրողներ-պատգամավորներ, կառավարություն-Ազգային ժողով, Ազգային ժողով-Նախագահ փոխհարաբերությունների ընդերքում, նպաստում օրենսդրական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և իր հերթին ամրապնդվում ու զարգանում պաշտամենտի գործունեությանը համընթաց:

Ազգային ժողովը ժողովրդի կողմից իրեն պատվիրակված և սահմանադրորեն ամրագրված օրենսդիր իշխանության ուժով ընդունում է.

- օրենքներ,
- որոշումներ,
- ուղերձներ,
- հայտարարություններ:

Օրենքներով են կարգավորվում առավել կարևոր, կայուն և բնորոշ հասարակական հարաբերությունները: ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածն ամրագրում է անձանց, հասարակության ու պետության համար կարևոր այն հարցերի շրջանակը, որոնք սահմանվում են բացառապես օրենքներով: Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը:

Պետության Հիմնական օրենքը, ինչպես նաև դրանում փոփոխություններն ընդունվում են ժողովրդի կողմից հանրաքվեի ճանապարհով: ՀՀ Սահմանադրության 112-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով հանրաքվեի կարող են դրվել նաև օրենքները: Այսպիսով, ժողովուրդը՝ որպես իշխանության աղբյուր, հանդես է գալիս օրենսդրի դերում: Ընդ որում՝ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքվեով: Ազգային ժողովի ընդունած օրենքները Ազգային ժողովի նախագահը տասնօրյա ժամկետում ուղարկում է Հանրապետության Նախագահին: ՀՀ Նախագահը օրենքը ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն կամ առարկություններով, առաջարկություններով վերադարձնում Ազգային ժողով՝ կիրառելով հետաձգող արգելք (վետո):

Պետական իշխանության մարմիններից միայն Ազգային ժողովին վերապահելով օրենքների ընդունման լիազորությունը՝ Սահմանադրությունը, միաժամանակ, ամրագրում է. **«Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ կետերով, 57, 59-րդ հոդվածներով, սույն հոդվածի երկրորդ մասով, 66, 67, 69, 73, 74, 74.1, 75, 77, 79-րդ հոդվածներով, 80-րդ հոդվածի երկրորդ մասով, 81, 83, 83.1, 83.2, 83.3, 83.4, 84, 94.1-րդ հոդվածներով, 101-րդ հոդվածի 2-րդ կետով, 103, 111-րդ և 112-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում,**

ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովն ընդունում է որոշումներ, որոնք ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի նախագահը»:

Այսպիսով, սահմանադրորեն նախատեսվում են Ազգային ժողովի կողմից որոշումների ընդունման հետևյալ դեպքերը.

1. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքերում Հանրապետության Նախագահը հայտարարում է ռազմական դրություն, կարող է հայտարարել ընդհանուր կամ մասնակի զորահավաք և որոշում է ընդունում զինված ուժերի օգտագործման մասին: Այս դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: Ըստ ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի վերջին մասի՝ Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Սահմանադրության 55-րդ հոդվածի 13-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին:

2. ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ Հանրապետության Նախագահը սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, հայտարարում է արտակարգ դրություն, իրականացնում է իրավիճակից թելադրվող միջոցառումներ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին: Արտակարգ դրություն հայտարարելու դեպքում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել՝ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացումը չեղյալ հայտարարելու մասին:

3. ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով, սահմանված կարգով որոշում է ընդունում Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու և այդպիսով վերջինիս սահմանադրական պատասխանատվության ենթարկելու մասին:

4. ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի հիման վրա Ազգային ժողովը պատգամավորների ծայների նույն հարաբերակցությամբ որոշում է ընդունում Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին:

5. Ըստ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ օրենսդիր մարմինը կարող է որոշում կայացնել իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով ուղերձներ և հայտարարություններ ընդունելու մասին:

6. Ազգային ժողովը որոշում է ընդունում պատգամավորին որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ իր համաձայնության (կամ անհամաձայնության) մասին (Սահմանադրության 66-րդ հոդված):

7. Ազգային ժողովի որոշմամբ դադարում են պատգամավորի լիազորությունները (Սահմանադրության 67-րդ հոդված):

8. Օրենսդիր մարմինը կարող է որոշում ընդունել դռնփակ նիստ գումարելու մասին (Սահմանադրության 69-րդ հոդված):

9. Անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի որոշմամբ ստեղծվում են ժամանակավոր հանձնաժողովներ (Սահմանադրության 73-րդ հոդված):

10. Ազգային ժողովը որոշում է ընդունում ՀՀ կառավարության ծրագրին հավանություն տալու մասին (Սահմանադրության 74-րդ հոդված):

11. Ազգային ժողովը որոշում է կայացնում ՀՀ կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ (Սահմանադրության 74.1-րդ հոդված):

12. Ազգային ժողովը կարող է ընդունել ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում, երբ կառավարությունը դրել է իր վստահության հարցը՝ իր կողմից ներկայացված օրենքի ընդունման առնչությամբ (Սահմանադրության 75-րդ հոդված):

13. Ազգային ժողովը որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ (Սահմանադրության 77-րդ հոդված):

14. Ազգային ժողովը որոշում է ընդունում ԱԺ նախագահի, ինչպես նաև ԱԺ նախագահի երկու տեղակալի ընտրության մասին (Սահմանադրության 79-րդ հոդված):

15. Ազգային ժողովը կարող է որոշում կայացնել հարցապնդումների, այսինքն՝ կառավարության իրավասությանը վերապահված որոշակի հարցերի մասին Ազգային ժողովի խմբակցության կամ պատգամավորական խմբի կողմից կառավարությանն ուղղված գրավոր հարցերի վերաբերյալ (Սահմանադրության 80-րդ հոդված):

16. Ազգային ժողովը որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին (Սահմանադրության 81-րդ հոդված):

17. Ազգային ժողովը որոշում է ընդունում ՀՀ Սահմանադրական դատարանի հինգ անդամ և Սահմանադրական դատարանի նախագահ նշանակելու, ինչպես նաև իր նշանակած անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու, կալանավորելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին (Սահմանադրության 83-րդ հոդված):

18. Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երեք հինգերորդով որոշում է կայացնում մարդու իրավունքների պաշտպան ընտրելու մասին (Սահմանադրության 83.1-րդ հոդված):

19. Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ Ազգային ժողովը որոշում է ընդունում անկախ կարգավորող մարմնի անդամների կեսին ընտրելու վերաբերյալ (Սահմանադրության 83.2-րդ հոդված):

20. Ազգային ժողովը ՀՀ Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում ՀՀ կենտրոնական բանկի նախագահի նշանակման, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պաշտոնանկ անելու մասին (Սահմանադրության 83.3-րդ հոդված):

21. Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ որո-

շում է ընդունում ՀՀ վերահսկիչ պալատի նախագահի նշանակման մասին (Սահմանադրության 83.4-րդ հոդված):

22. Ազգային ժողովը կարող է որոշում ընդունել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, երբ այդպիսի որոշման նախագիծ է ներկայացվել ՀՀ Նախագահի կամ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից (Սահմանադրության 84-րդ հոդված):

23. Ազգային ժողովը որոշում է կայացնում ՀՀ արդարադատության խորհրդի երկու իրավաբան-գիտնական նշանակելու մասին (Սահմանադրության 94.1-րդ հոդված):

24. Օրենսդիր մարմինը որոշում է կայացնում Սահմանադրական դատարան դիմելու մասին՝ հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերի լուծման, Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին, Ազգային ժողովի կողմից նշանակված Սահմանադրական դատարանի անդամի լիազորությունները դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցելու մասին եզրակացություն ստանալու նպատակով, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից օրենքով նախատեսված դեպքերում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու համար:

25. Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ որոշում է ընդունում ՀՀ գլխավոր դատախազի նշանակման, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում պաշտոնանկ անելու մասին (Սահմանադրության 103-րդ հոդված):

26. Ազգային ժողովը որոշում է ընդունում ՀՀ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նպատակով հանրաքվեի անցկացման առաջարկով ՀՀ Նախագահին դիմելու կամ ՀՀ Նախագահի նախաձեռնությամբ համաձայնություն տալու մասին (Սահմանադրության 111-րդ հոդված):

27. Ազգային ժողովը որոշում է ընդունում օրենքները հանրաքվեի դնելու մասին (Սահմանադրության 112-րդ հոդված):

28. Ազգային ժողովը որոշումներ է ընդունում իր գործունեության կազմակերպման հարցերով (Սահմանադրության 62-րդ հոդված):

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 49-րդ հոդվածի համաձայն՝ իր գործունեության կազմակերպման հարցերով Ազգային ժողովը կարող է ընդունել հետևյալ որոշումները.

ա) հերթական նստաշրջանի, չորսօրյա նիստերի օրակարգերը հաստատելու և դրանցում փոփոխություններ կատարելու մասին,

բ) արտահերթ նստաշրջանի, նիստի ընթացակարգերը հաստատելու մասին,

գ) հարցի քննարկման հատուկ ընթացակարգի մասին,

դ) հրավիրված անձանց ելույթ ունենալու թույլտվության մասին,

ե) Հանրային հեռուստառադիոընկերությամբ Ազգային ժողովի նիստի՝ ուղիղ եթերով կամ տեսագրությամբ (ձայնագրությամբ) հեռարձակելու մասին,

զ) Ազգային ժողովի նիստի անցկացման վայրը փոխելու մասին,

է) Ազգային ժողովի դռնփակ նիստ անցկացնելու մասին,

ը) հարցի քննարկումը մինչև մեկ ժամով ընդմիջելու մասին,

թ) հերթական նստաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգերի նախագծում հարցի ընդգրկումը հետաձգելու մասին,

ժ) հարցի քվեարկությունը կրկնելու մասին,

ժա) օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը երկու ընթերցմամբ քննարկելու վերաբերյալ,

ժբ) հարցը երկրորդ, երրորդ ընթերցման ներկայացնելու համար սահմանված ժամկետները փոփոխելու մասին,

ժգ) հարցի քննարկումն առաջարկությունների ներկայացման փուլ վերադարձնելու մասին,

ժդ) հարցապնդման վերաբերյալ իրավասու պետական կառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց առաջարկություններ ներկայացնելու մասին:

2005 թվականին ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում սահմանվեց, որ **«Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել ուղերձներ և հայտարարություններ»:**

Ուղերձի կամ հայտարարության միջոցով արտահայտվում է Ազգային ժողովի դիրքորոշումը որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ:

ՀՀ օրենքները, Ազգային ժողովի որոշումները, ուղերձները և հայտարարությունները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությամբ մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին՝ բաց քվեարկությամբ: Ազգային ժողովի որոշումները, ուղերձները և հայտարարությունները ստորագրում և հրապարակում է Աժ նախագահը:

ՀՀ հիմնական օրենքի 62-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ **Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ:** Այսինքն՝ եթե պետական իշխանության այլ մարմինների լիազորությունները հնարավոր է նախատեսել օրենքներով, ապա օրենսդիր մարմնի լիազորություններն ունեն միայն սահմանադրական ամրագրում և, այդպիսով, վերջնական են: Դա նշանակում է, որ ՀՀ Սահմանադրությունից բացի, այլ նորմատիվ իրավական ակտերով հնարավոր չէ նախատեսել օրենսդիր մարմնի լիազորությունների ավելացում կամ սահմանափակում: Այսպիսով, Ազգային ժողովին ուղղակիորեն արգելվում է իր համար սահմանել սահմանադրորեն չնախատեսված լիազորություններ: Ազգային ժողովի կարգավիճակը, ինչպես և սահմանադրական կարգի հիմունքները կարող են փոփոխվել միայն Սահմանադրության վերանայման ու փոփոխման կարգով, այսինքն՝ հանրաքվեի ճանապարհով՝ ժողովրդի կողմից:

Ազգային ժողովն իր լիազորությունների շրջանակում կարող է անվստահություն հայտնել ՀՀ կառավարությանը, հարցերով և հարցապնդումներով դիմել կառավարության անդամներին, ձևավորել ժամանակավոր հանձնաժողովներ, կատարել ընտրություններ, նշանակումներ պաշտոններում, վերահսկողություն իրականացնել պետական բյուջեի նկատմամբ, լսել բյուջեի կատարման հաշվետվությունը և այլն:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ **Ազգային**

ժողովի գործունեության, նրա մարմինների ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով: Համաձայն Կանոնակարգի 2-րդ հոդվածի՝ Ազգային ժողովը գործում է Սահմանադրությանը և Կանոնակարգին համապատասխան՝ նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմինների, խմբակցությունների և պատգամավորական խմբերի աշխատանքի միջոցով: Ազգային ժողովի գործունեությունը հիմնվում է քաղաքական բազմակարծության, նստաշրջաններում և նիստերում հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:

Ազգային ժողովի մարմիններն են.

- Ազգային ժողովի նախագահը,
- Ազգային ժողովի նախագահի տեղակալները,
- Ազգային ժողովի հանձնաժողովները,
- Ազգային ժողովի պատգամավորները:

Ազգային ժողովի նախագահը, տեղակալները և հանձնաժողովների նախագահները ընտրվում են ԱԺ-ի առաջին նստաշրջանում՝ Կանոնակարգով սահմանված կարգով:

Ազգային ժողովում կազմավորվում են խմբակցություններ, և կարող են ստեղծվել պատգամավորական խմբեր:

Կանոնակարգի 14-րդ հոդվածի համաձայն՝ խմբակցություններն ստեղծվում են նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքներին համապատասխան՝

ա) համամասնական ընտրակարգի համար նախատեսված մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված պատգամավորներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում,

բ) կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված պատգամավորների միավորմամբ ստեղծված խմբակցությունում ընդգրկվում են նաև այդ դաշինքը կազմած կուսակցությունների առաջադրմամբ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները:

Իսկ Կանոնակարգի 15-րդ հոդվածը նախատեսում է, որ առնվազն տասը պատգամավորներ կարող են ստեղծել պատգամավորական խումբ՝ Ազգային ժողովի նախագահին ներկայացնելով խմբի ստեղծման մասին իրենց ստորագրած հայտարարությունը, որը նիստը վարողը հրապարակում է Ազգային ժողովի առաջիկա նիստում:

Կանոնակարգը սահմանում է օրենքների ընդունման, պառլամենտի աշխատանքի կազմակերպման, Ազգային ժողովի մարմինների ձևավորման ու գործունեության ողջ ընթացակարգը, այդ թվում՝

- Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների ընտրության կարգն ու իրավասությունները,
- Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ձևավորման կարգը, գործունեության ոլորտներն ու սկզբունքները,
- Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման և գործունեության հիմունքները,
- խմբակցությունների և պատգամավորական խմբերի ձևավորման ու աշխա-

տանքների կազմակերպման կարգը,

- Ազգային ժողովի նստաշրջանների և նիստերի գումարման, օրակարգերի ձևավորման, քննարկման ու հաստատման կարգը, ինչպես նաև՝

- Ազգային ժողովում քննարկվող հարցերի ներկայացման և քննարկման կարգը, օրենքի նախագիծը շրջանառության մեջ դնելու և օրինագծի քննարկման ընթացակարգը:

Կանոնակարգում ամրագրված է նաև Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու և հանրաքվեի դրվելիք օրենքի նախագծերի քննարկման ընթացակարգը, պետական բյուջեի քննարկման, հաստատման, տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման կարգը: Սահմանված են Հանրապետության Նախագահի իրավասությանը վերապահված և ՀՀ կառավարությանն առնչվող հարցերի քննարկման ընթացակարգերը, Ազգային ժողովի աշխատանքների կազմակերպման կարգը և այլ հարցեր:

Այսպիսով, Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակն ամրագրող 62-րդ հոդվածը նշանակում է, որ պետական իշխանության մարմիններից միայն օրենսդիր մարմինն իրավունք ունի ընդունելու օրենքներ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և պարտադիր են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների և նրանց միավորումների, ոչ պետական մարմինների, ՀՀ-ում գտնվող բոլոր անձանց համար: ՀՀ օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, ապահովեն սահմանադրաիրավական նորմերի իրականացումը, հասարակական հարաբերությունների պատշաճ կանոնակարգումը:

КОММЕНТАРИЙ СТАТЬИ 62 КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Г. Г. АКОПЯН

Данная статья содержит комментарий статьи 62 Конституции Республики Армения. Статья гласит, что законодательную власть в РА осуществляет Национальное Собрание. Парламент страны принимает законы, а также решения, делает послания и объявления. Автор считает, что Конституция должна определить Национальное Собрание не только как законодательный, но и как представительный орган государства. Полномочия Национального Собрания предусмотрены Конституцией, а порядок деятельности парламента, принципы формирования и работы органов Национального Собрания предусмотрены Конституцией и Регламентом парламента РА. В статье раскрывается суть конституционных норм о парламенте страны.

COMMENTS ON ARTICLE 62 OF THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA

Н. Н. НАКОБЯН

The article contains a detailed commentary on Article 62 of the RA Constitution. According to Article 62, in the Republic of Armenia the legislative power is fulfilled by the National Assembly which passes

laws, as well as makes other decisions, addresses messages and announcements. It is the author's opinion that the National Assembly should be defined not only as a legislative, but also as a representative authority. The full rights of the National Assembly are defined by the RA Constitution, as for the order of the National Assembly activities and its principles, and the formation of its subdivisions, they are defined in the RA Constitution and the Statute of the National Assembly. The article discovers the essence and contents of the constitutional norms of the National Assembly.

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ*

Խորհրդային իրավագիտության մեջ տասնամյակներ շարունակ որպես սահմանադրական իրավունքի տարբերիչ հատկանիշ նշվել է պատասխանատվության ինստիտուտի բացակայությունը: Հետխորհրդային իրականության պայմաններում, ժողովրդավարական սկզբունքներ որդեգրած պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար կարևորվեց ոչ միայն սահմանադրական արժեքների հռչակումը, այլև սահմանադրաիրավական նորմերի կենսագործումը: Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի գերակայության ընդունումն ուղեկցվեց սահմանադրական ինստիտուտները նաև սեփական սանկցիաներով կյանքի կոչելու անհրաժեշտության, սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի կարևորության գիտակցմամբ: Իրավաբանական գրականության մեջ աստիճանաբար ընդունվեց այն տեսակետը, ըստ որի սահմանադրական իրավունքն ունի իր կարգադրագրերի գործունեության ապահովման սեփական մեթոդ, այսինքն՝ ունի պատասխանատվության իր ինստիտուտը: Պատասխանատվության սեփական ինստիտուտի առկայությունն իրավունքի ճյուղի լիարժեքության, ներքին բովանդակային ամբողջականության ու ինքնուրույնության վճռորոշ և անհրաժեշտ պայման է: Սահմանադրական պատասխանատվությունը իրավաբանական պատասխանատվության հատուկ տեսակ է, պետական իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակի բաղկացուցիչ մասը, իշխանության ճյուղերի միջև գործող «զսպումների և հակակշիռների» կառուցակարգի անօտարելի տարրը¹: Սահմանադրական պատասխանատվությանը նվիրված ուսումնասիրություններում կարելի է հանդիպել պատասխանատվության նշված տեսակի տարբեր անվանումների. «սահմանադրա-(պետական)-իրավա-

¹ Սահմանադրական պատասխանատվության մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, մեմագրություն, Երևան, 2008, 516 էջ: